

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով

Տարեկան . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տոյար

Վեցամսեայ 1,50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշարման տողը

20 սանդիմ




ԻՐԱՎԱԿԱՆ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ՀԱՍՏԷ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

«ВѢСТНИКЪ»

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեմ տրուիր

ՄԵՐ ԳՈՐԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Մակեդոնական վերջին ապստամբութիւնը մեզ համար խոր հրդեհածելու շատ մը դասեր կը պարունակէ իր մէջ: Մեր յեղափոխականներու մէջ չայ դասակարգ մը որ յեղափոխութիւնը միայն գործիւն մէջ տեսած, կը կարծէ զիտնալ թէ աւելն երկիր ամէն ժողովուրդ կարելի է միեւնոյն ձեւով յեղափոխել: Այսպիսիներ իրենց խանդոտ երեւակայութիւնով կը մտնան սոսկ տեղւոյն, ժամանակին և պարագային յարմարութիւնները լրջօրէն նկատի առնել: Այնքան կրեալն, Մակեդոնիան և Հայաստանը միեւնոյն քարտէսին վրայ միեւնոյն թշնամիին դէմ կը տեսնեն և հետեւաբար նոյն ձեւով գործելու կիլլեն, առանց լրջօրէն նկատողութեան առնելու այդ նահանգներու բնական ու քաղաքական դիրքերը, բնակչութեան որակը, քանակը և ընկերային բարքը ու ցեղային և կրօնային բազմազանութիւնը, և որ էն կարեւորն է սահմանակից երկիրներու վերաբերումը: Կարծեմ անվիճելի է թէ այս կարեւոր պարագաներու ուսումնասիրութիւնը առաջին պայմանն է ու ե քաղաքական յեղաշջումի յաջողութիւնը ապահովելու, և անյաջողութեան պարագային կործանարար հետեւանքներէ խուսափելու համար:

Վերը ըսինք թէ Մակեդոնական վերջին ապստամբութիւնը մեզ համար խորհրդածելու շատ մը դասեր կը պարունակէ: Ընթերցողք կը յիշեն անշուշտ 1894ի Սասնոյ կոտորածին հետեւանք 1895 Մայիսի բարենորոգմանց ծրագիրը ընդունուելէ յետոյ՝ Տրապիզոնի մէջ Դաշնակցականներու երկու փաշայի դէմ զնդակ արձակելը և այդ առթիւ հրատարակուած մէկ թուոցիկը՝ որ այլևս թուրք բարձրաստիճան պաշտօնեաներու մահ կը սպառնար:

Ատոր հետեւեալ օրն էր որ, երկու զնդակի և թուոցիկի մը չորս պառնալիքին հետեւանքով, նոյնքա, զաքէն սկսեց Հայոց ջաշքը որ

ամբողջ Հայաստանը հայ արեան ճապողիքներով կարմիր ներկելէ վերջ միայն դադրեցաւ: Հարկ է յիշել հոս Վանայ Դէպքը, խանասորի Առշաւանքը որ ամբողջ Վասպուրականը հայ արեանով ողողեցին: մինչ ասդին, Մակեդոնիոյ մէջ, աւելն օր նոր արշաւանքներ կը գործածուին և ահա ապստամբութիւն մըն ալ կը ծագի, բայց նոյն թուրք կառավարութիւնը միայն զէնք կրողները կը հետապնդէ, և առանց ջարդի ու սպանց հաւաքական հալածանքի խնդիրը կը գոցուի: Նաև Սասնոյ կոտորածը երեք ամիսէն հազիւ Եւրոպա կիմանայ: մինչդեռ Մակեդոնիոյ մէջ Պուլկարի մը կամ Սերպի մը սպանումը վայրկեանապէս կը լսուի ամէն կողմ: Հայաստանի մէջ ամէն իսլամ կառավարութեան իրաւունք կը ստանան գաւառի մը ամբողջ հայ բնակչութիւնը հալածելու պղտիկ դէպքի մը պատճառաւ: մինչդեռ Մակեդոնիոյ մէջ կանոնաւոր դօրքը միայն ապստամբ խումբերը կը հալածէ առանց ջարդի:

Թուրքիոյ Լասերը կազմող սա երկու երկիրներու մէջ, Հայաստան և Մակեդոնիա, պատահած ամէնօրեայ անցքերու և դէպքերու այս անբաղդատելիօրէն տարբեր հետեւանքները մեզ խորհրդածելու լուրջ դասեր են: Այնքան մեզ կը սովորեցնեն թէ գիրքերու մէջ կարգացում յեղափոխութիւնը գործնականէն ահագնապէս կը տարբերի: Հայաստանի մէջ գործելը ոչ իտալիան, ոչ Ֆրանսան յեղափոխելու կը նմանի և ոչ ալ Մակեդոնիան ապստամբեցնելու:

Տասնեակ տարիներէ ի վեր մեր շուրջ կրկնուող այս դէպքերը աչք ծակելու չափ խոշոր փաստեր են թէ մեր երկրի մէջ գործելու եղանակը երբէք ձեւելու չենք ոչ Ֆրանսացւոց, ոչ իտալացւոց և ոչ Մակեդոնացւոց գործելու եղանակին վրայ: այլ մեր գործունէութեան պայմանները ու եղանակը մեր երկրին ու ժողովուրդին կացութեան վրայ ձեւելու և դառն փորձառութիւններէն օգտուելով ճշդելու ենք:

Այս ալ ներհուն հմտութեան և խորին ուսումնասիրութեան կը

կարօտի, որ Հայաստանը միայն քարտէսի վրայ գննող և թուղթի վրայ միայն յեղափոխութիւն պռնալ գիտցողներու գործը չէ: ԳՈՐԾԵՐ

ԲՈՂՈՔԻ ԶԱՅՆԵՐ ՀԱՅ ՏԻԿԻՆՆԵՐԷՆ

Պոթոնի Հայրենիք թերթի 164 թիւին մէջ երեւցած Վեհապետի այն լստի խօսքին դէմ՝ որով մաս մը հայեր կը հրաւիրէր որ իրենց կիները Սասուն եւ Մուշ տանին թուրքին եւ քուրտին պահանջին գոհացում տալու համար, մենք բողոքած էինք Խաւաթի 66 թիւի խմբագրականով: Եւ ալ Արեւիկայի հայուհիներն ալ այդ առթիւ Ձայն Հայրենեացի մէջ հետեւեալ նամակով զայրութեամբ նողկանք կը յայտնեն Հայրենիքի խմբագրին ու իր խմբակին դէմ:

ՓՐՈՒԼԻՏԷՆՍ, 4 Հոկտեմբեր
Տէր խմբագիր Ձայն Հայրենեացի
Ներքեւ ստորագրող Հայուհիներս թերթիդ միջոցաւ կուգանք մեր Բողոքոյ և Ձայնութի ձայնը բարձրացնել ձեր դրացի թերթի խմբագիր պարոնին դէմ, որ ամէն բարոյական սկզբունք և ընտանեկան սրբութիւն ոտքի տակ առած՝ լրբութիւնը կուենայ հրաւիրել հայ կիները՝ որ երթան թուրքերու և քուրտերու գաղանային կրից ենթարկուելու:

Այդ պարոնի ներկայացուցչները դեռ քանի մը ամիս առաջ (Փրովիտէնսի Դաշնակցական Լիգայի միտէի հրապարակային հանգանակութեան օրը) սրբապղծեցին յեղափոխական սուրբ բեմը՝ իրենց անպարկեշտ և անխորոյրական վարմունքովը, վարմունք մը՝ որ ամեն նէն ստորին կարգի սրիկան ինքզինքին թող չը պիտի տար կիներու ներկայութեան, վարմունք մը՝ որ փրովիտէնսի հայութեան զայրութիւնը իր գագաթնակէտին հասցուց և կիները անգամ կը զղջային թէ ինչպէ՞ս հանդուրժեցին, և բեմէն վար քաշելով չը բզքեցին այդ մարդիկը: Այն ատեն լեցնիք, մտածելով թէ՛ հայ կնոջ և աղջկան պատիւը ապահովելու համար ուխտ ընող Դրօշակեանները՝ պիտի փու-

թան սանձահարել իրենց այդ անպարկեշտ ատենախօսները: Բայց աւագ, յուսախար եղանք, և այժմ իրենց ներկայացուցչի լրբութիւնը հոն հասաւ որ հայ կինը թրքական գաղանկութեան ենթակայ ըլլալու հրաւիրեց: Ահա՛ քեզի տիպար յեղափոխական մը որ իր կեանքի գնովը կոչուին ունի իր ցիղի պատիւը փրկելու, (•••):

Այդ բաւական չէր, և ահա իր թերթի վերջի թուոյն մէջ Հնչակեան գործիչներէն Պ. Գ. Զ. մօրը և աւուսնոյն պատիւը խնդրոյ առարկայ ըրաւ, այն միակ պատճառաւ որ մէկը Հնչակեան մը ծնած ըլլալու, միւսը Հնչակեանի մը հետ ամուսնացած ըլլալու յանցանքը գործած էին: Թէեւ մեր քոյրերը այժմ Բաղնիքեան ճիրաններուն մէջ՝ միջոց չունին իրենց արդար զայրութի բողոքը բարձրացնելու այդ բարքով ինկած պարոնի դէմ, բայց անոնց հեռաւոր քոյրերը չեն կարող անտարբեր մնալ հոս: Եթէ մենք լռենք քարերը պիտի աղակեն:

Ի դիմաց Փրովիտէնսի
Հայուհիներու
Տիկնայք՝ Ա. Հ., Փ. Կ.,
Զ. Հ., Ա. Մ., Մ. Հ.,
Ե. Գ., Հ. Թ., Ս. Ս.,
Ա. Թ., Մ. Թ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Արմենիա Լիճի. գրեց Պ. Տոնապետեան. Լոնտոն. տպարան Հայ Որբանոցի, 2իկվեյ:

Արտասահմանի բոլոր հայ թերթերն, ինչպէս Ռուսահայ մամուլը, մանրամասն ուսումնասիրութեանց մէջ հայ հասարակութեան ծանօթացուցին արդէն անգլիացի ուղեւոր Հ. Լինչի Ռուսահայ եւ Թրքահայ նահանգներու վրայ հրատարակած ուսումնասիրական երկու հատորները:

Պ. Տոնապետեան այժմ Լոնտոնի մէջ այդ երկասիրութեան գլխաւոր հատուածներուն հայերէն թարգմանութիւնը 157 երեսնոց մասնաւոր հատորի մը մէջ ամփոփելով հրատարակութեան կուտայ, որպէս զի «Իր երկրին նուիրուած այս հսկայական աշխատութեան իսկական ճաշակ առնելու մի կերպ դուրս թիւն տայ անգլիերէն լեզուի անսեղանկ հայ հասարակութեան»:

Արդարեւ, ինչպէս բոլոր հայ թերթերը միաձայնութեամբ խոստովանեցան, չէր եղած մինչեւ այսօր մեր ազգին, մեր բարքերուն, Հայաստանի աշխարհագրական, պատմական ու տեղագրական ամենափոքր մասնամասնութեանը վրայ աւելի կատարեալ աշխատասիրութիւն մը: Լինչի հարցով գործը, 984 մեծագիր էջերով երկու հատորներէ բաղկացած, անով մանաւանդ եզական է որ, հեղինակը միմիայն նկարագրութեանց ու վիճակագրութեան մէջ չէ սահմանափակուած: Գործը կը պարունակէ 197 գուշտոր լուսանկարներ, 15 քարտէսներով ու յատակագծերով, ու Հայաստանի եւ չրջակայ երկիրներու մէկ միւս քարտէսը, ամենէն կատարեալը, ամենէն ճշգրիտը, զոր Հայաստան ունեցած ըլլայ:

Լինչի այս գործը, եթէ արժանիքի ու հմտութեան ամէն գնահատում մէկ կողմէ ալ թողունք, դարձեալ ինքնին հրաշակիր մ'է չքեղութեան, ճոխութեան, նկարներու գեղեցկութեան ու առատութեան կողմէ: Անգլիոյ ու Ամերիկայի բովանդակ մասերը, նոյն իսկ հայաստանց Մոսկովի Բոսորը, ինչպէս գրեթէ բոլոր արեւելագետները, նոյնիսկ մոլորաշող թրքաւոր Վամբէրին, գնահատութեան ու սքանչացումի միանուագ ազգակով մը ողջունեցին այս հսկայ աշխատասիրութեան հրատարակութիւնը, անոր վերաբերութեամբ երկար ուսումնասիրութիւններ նուիրելով: Վստաւարութեան ու պարունակութեանց մանրամասնութեան կողմէ, կըսէ Ռոտլի թերթը, ուղեւորական ամենափոխառի գործն է այս, որ երբ եւ մեր ոչ պարտութեանը յանձնուած լինի: Գեղեցիկութեան իրաւունքով, ուղեւորական եւ ուսումնասիրական այսպիսի գիրքը, այսքան լիակատար ու չքեղ բովանդակութեամբ, Անգլիա տասը տարիէ ի վեր չէ տեսնուած:

Անկեղծ երախտագիտութեան արժանի է ուրիմն Պ. Տօնապետեան, որ մեր մայրենի երկիրներու վրայ այս ստուգար հեղինակութեան մէկ հակիրճ բայց ճշգրիտ պարունակութիւնը կը հայացնէ: Տարակոյս չկայ թէ զբերումը մը տիրական առաւելութիւնը

ընթերցողին պայծառապէս հասկնալի պահանջ մէջ կը կայանայ: Ու Պ. Տօնապետեանի այս աշխատասիրութիւնը անով մանաւանդ գնահատելի է որ, թէեւ ուսանայ բարբառով գրուած, կատարելապէս գերծ կը մնայ, մէկ ծայրէն միւսը, ոտար կամ աղաւաղ եւլ բառերու այն անտանելի խառնակոյտէն, որով արատաւորուած է նոյնիսկ մեր ուսանայ լուսագոյն գրողներէ չաւերուէր գրիչը:

Պ. Տօնապետեանի այս հատորը կը սկսի Լինչի մէկ ինքնագիր կենսագրութեամբ, ուր նշանակելու ստորագրութեամբ պարագան կայ որ Լինչի մեծ մայրը Սեւաստացի Հայուհի մ'է եղեր:

Լինչի այս երկհատոր գործին առաջին մասը Ռուսահայաստանի նուիրուած է. Պ. Տօնապետեան իր կարգին նախ կողմասի վրայ Լինչի տուած տեղեկութեանց կարեւոր մասերը կը ներկայացնէ, նախագիտելու աշխարհագրական արդի դիրքին, անոնց անցեալին ու ներկային, բնակչութեանց տեսակին ու թիւին վրայ ծանօթութեաններ տալով: յետոյ կանգնի ընկերային ու քաղաքական խնդիրներու, գործին կարեւորագոյն մասը, ստորագծելով հայ հեղին գաղաւթ տոկունութեանը, գործունեայ յամառութեանը, գերազանցողէն յառաջդիմաւոր նկարագրին վերաբերութեամբ հեղինակին արտայայտած խանդոտ սքանչացումը: Կուրուագէն անցնալի տեսակետով Հայ Եկեղեցիին ամփոփ պատմութիւնը, թէ ինչպէս մինչեւ հիմա կանգուն մնացեր է՝ ազգային անկախութեան վերնալէն վերջն ալ, թէ ինչպէս բոլոր Հայերը, նոյնիսկ գորգագիտ զոսակապողը, գուրգուրանքով անոր կը փարին, իբր իրենց ուրոյն ազգայնութիւնը անձնաւորող կանգուն միակ հիմն սրկութիւնը, ու աղօտ խորհրդանշանը ապագայ բաղձանքներու: ու այս մասը կը փակուի Անիի աւերակներուն իտեւ, անոնց անցեալ շքեղ փոքրին ոգեկոչութեամբ զգացուած նկատողութեանց մէջ:

(Շարունակելի)

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Վառնայի Հ. Յեղ. Դաշնակցութեան «Արշալոյս» Մասնախումբի գեղեցնմանը

(Շար. նախորդ թիւէն)

Բացի 800 ֆրանքի տոմսակէն, կըլան նաեւ նուիրատուութիւններ, այս ամէնն ալ Վարդոն կը գրպանէ: Նուագահանդէսը յաջող կերպով վերջանալէն ետք, Վարդոն կարգ մը կեղծանուններէ ստորագրուած եւ զօմիթէի կնիքով կնքուած հաշուեկշիռ մը կը պատրաստէ եւ Տիկինաց մասնախումբին կը յանձնէ: Մասնախումբը զարմացմամբ կը տեսնէ որ այդպիսի յաջող նուագահանդէսէ մը հազիւ թէ 250 ֆրանքի չափ գումար հասոյթ կը գոյանայ:

Մասնախումբը կզգայ թէ Վարդոն իր վստահութիւնը չարայար կը դրծածէ, հետեւաբար իր առանձին մէկ ժողովին մէջ կը սկսի աչքէ անցունել զօմիթէի կողմէն իր ստացած թուղթերը, որոնց ամբողջն ալ Օ. Գ. ձեռագիրներն էին: Եւ որոնց ճակատին ծայրը գրուած էր. «Պաշտօնական», «Կիսապաշտօնական», «Մտերմական» եւ այլն: Մասնախումբը կը սկսի իր հաշիւները մաքրել ջանալու, որովհետեւ մինչեւ նուագահանդէսի օրը ինքը անպայման վստահութիւն (°°) ունեցած էր Վարդոյի վրայ եւ պատշաճօր (°°) մէկը ճաշկոյտ: Իսկայն կը պահանջէ Վարդոյէն ժընէլ զրկուած զրամներու հրատարակութիւնը: Վարդոն Օ. Գ. ձեռագրով եւ զօմիթէի կնիքով պաշտօնական նամակով մը պայմանագրով կորոչէ եւ կը ստորագրէ թէ որոշուած օրն անպատճառ պիտի հրատարակուի Դրօշակի մէջ:

Վիճակահանութեան զուտ հաշուեկշիռը մասնախումբը Վարդոյէն կուզէ: Վարդոն ճիշդ խաչագողներու ձեռով, հաշուեկշիռ մը կը պատրաստէ Տիկին:

ներու ներկայութեան (Տիկիններէն մէկը իր զարմանքը կը յայտնէր թէ, թուղթը պատրաստած միջոցին՝ վարդոն քանի մը անգամներ իր գրածները կը պատռէ նորէն կը սկսի գրել, այնպէս որ 2-3 փամէն հազիւ կը վերջացնէ գտոր մը թուղթը) եւ մասնախումբի անդամներուն ստորագրել կուտայ եւ ինքն ալ կը ստորագրէ: Եւ երբ Տիկինները եւ Օրիորդները ինչպէս կարող էին այդ խաչագողներու յատուկ ձեւ անեցող գրութեանէն բան մը հասկնալ, ամենէն հաշուագէտ մէկը այդ թուղթը քանի մը անգամներ կարդալէն եւ հաշուելէն վերջը հազիւ կրնայ զօրաբարութեամբ դուրս բերել պարունակած գեղեցկութիւնը: Եւ այսպէս ալ խեղճ Տիկիններն այդ օրէն կը կարծեն թէ վիճակահանութեան մէջ զեղծում տեղի ունեցած չէ, մասնաւորապէս որ Վարդոն իր ձեռագրով պատրաստած է այդ հաշուեկշիռը եւ ինքը ստորագրելէն վերջը Տիկիններուն ալ ստորագրել տուած է սողայելական ցած նպատակաւ:

Մասնախումբը հետզհետէ կը սկսի վհատիլ, ինկատի ունենալով իր անգամներուն եւ նուիրատուներուն արբատունները, որոնք կը պահանջեն եւ զիր վստահութեան համար իրենց կեղծանունները կարգալ Դրօշակի մէջ, իրենց տուած գումարով մէկտող: Իսկ միւս կողմէն կը տեսնէ որ Վարդոն միշտ խաբուսիկ միջոցներով կուզէ հաւատարմել թէ անունները պիտի հրատարակուին: Վարդոն ներքինալով մասնախումբի պահանջէն ստախոսութեամբ կըսէ «Ծանկը պարունակող նամակը կորսուած է (°°)», եւ ժընէլ հասած չէ: Տիկինները անգամ մը եւս ցանկ կը փառաբանեն ու Վարդոյին կը յանձնեն: Օրերը անցնելէն վերջ՝ երբ այդ վիճած ստորաբարածը կըսէ «այդ նամակը քիչ ալ կորսուած է եւ ժընէլ հասած չէ», Մասնախումբը այլեւս կը համոզուի թէ իրեն գիտացող գնահատող ոչ թէ երբեմնի պատուաւոր ճանչցուած «Իսաք Արմախ»ն է, այլ բախտախորհրդ, խաբեայ, ստախոս, անպատկառ խաչագող մըն է, ուստի Մասնախումբը մի անգամընդ միշտ լուծուի կորոչէ եւ իր վստահութիւնը կը վերցնէ Դաշ-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (24)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԻՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ԲՈՒԱՎԱՆԸ...

— Ախ, Տէր Հայր, իմ մասին հարցում մի ընէք, առարկեց Վանական: աւելի աղէկ է՝ դուք խօսիք: Շատոնց է որ գեղերու վիճակը հեռու եղած է աչքէս: Կուզեմ ամէն բան իմանալ: Մանաւանդ Ռէս Մէլիքին տունն որո՞ւ ձեռքն է. ատիկա յայտնեցէ՛ք ինծի:

— Ռէս Մէլիքին տունը քանդուած է երեք տարիներէ ի վեր, նկատել տուաւ Տէր Օհան: Կառավարութիւնը չթողուր որ ծախուէր իր բարեկամներու ձեռքով:

— Ինչո՞ւ համար չթողուր:

— Պատճառն այն է որ թուրք իշխանութիւնը կը յուսայ ատանկով ձեռք ձգել զինքը: վերջապէս կը հաւատայ թէ այդ կալուածներուն համար Ռէս Մէլիք պիտի գայ՝ անձնատուր ըլլայ իրեն:

— Երբտ լա՛ւ: Տիրացու Սիմոն ո՞ւր է արդեօք:

— Չե՞ս իմացեր թէ խեղճ տղուն ինչե՛ր պատահեցան:

— Ո՛չ:

— Ի՞նչ ըսեմ... քու մահուան դատապարտութեանէ ետք, մեր հրէշ նորոնծայ քահանան մատնեց զինքը՝ յայտարարելով որ քու միջոցակցող է եղեր ան: Կառավարութիւնն, առանց ապացոյց մը ունենալու, բանտարկեց թշուառ երիտասարդը վեց ամիսէն աւելի: Կազմուածքով տկար էր. չկրցաւ տոկալ. երբ բանտէն արձակուեցաւ, սկսած էր արիւն թքնել... Ամիս մը հազիւ ապրեցաւ... օրերը քեղի տուաւ:

Վանականին սիրտը խշխշաց ու ամբողջ մարմնովը ցնցուեցաւ՝ այդ չարաշուք գուժը ընելով:

— Կրո՞ղ... այդ հրէշը կենդանի՞ է դեռ, գոչեց Վանական:

— Կենդանի՞... ո՛չ, կենդանի չէ, չեղանց Տէր Օհան:

— Ստակա՞ծ է:

— Չէ՛:

— Հապա՞:

— Անանկ վիճակի մը մէջ ինկած է որ ո՛չ կենդանի է եւ ո՛չ ալ մեռել մը: Իր կեանքը զոհուած մըն է իրեն համար, որուն մէջ չարաշուք կը տանջուի:

— Արդարութիւն... արդարութիւն... վերջապէս այդ դաւաճանն իր պատիժը գտած է, ըսել կուզէք:

— Այո՛, այդ դաւաճանն իր պատիժը գտած է: Ամբողջ մարմնով հալմանդամ եղած է ու՝ տունին մէկ անկիւնէն միւսը քաշկատուելով, կապրի:

— Հապա Դղիր Զաքոյի տունն ի՞նչ եղաւ:

— Կին մը ունէ՛ր՝ մեղաւ. իսկ տունը քանդուած կը մնայ:

— Ի հա՛րկէ... տունը աւերողին տունը Աստուած կը քանդէ: Տէր Հայր: Բայց կարծեմ թէ Գղիթ Զաքօ մանչ մըն ալ ունէր, անանկ չէ՞:

— Իրա՛ւ է... հօրը սպանութեանէն ետքը միտած էր ան:

Վանական վարկեան մը լուռ մնաց: Կարծեմ՝ ամփոփել ուզեց իր գանկին մէջ լեցուած հարցումներու ամբողջ զանգուածը:

— Բայց ըսէ՛ ինծի, Վանական, ընդհանրեց Տէր Օհան փղձկուած ձայնով մը. ո՞ւր է Ռէս Մէլիք, ո՞ւր մնաց... ի՞նչ եղաւ իր աղջիկը... ո՞ղջ են թէ մեռած... ախ, երբէք տեղեկութիւն մը չունիմ անոնցմէ:

— Որչա՛փ ատեն է որ լուր մը առած չէք:

— Սանկ նանկ երեք տարին կանցնի:

— Անհոգ եղէ՛ք. երկուքն ալ ողջ են ու կը գրաւնուին Պուլկարիա:

— Պուլկարիա՞:

— Այո՛:

— Արդեօք հանգիստ են:

— Միթէ՞ հայրենեաց կարօտը քաշող մարդու մը համար հանգստութիւն կարելի՞ է գտնել:

— Ճշմարիտ է: Բայց հոն ի՞նչ գործ կրնայ ընել:

(Շարունակելի)

նակցութեան վրայէն այ քանի որ սա այդ տեսակ մէկը իբր ներկայացուցիչ կը պահէ:

Թանցանքը որոշու է:
Մեր ազնիւ ընթերցողները պէտք է գիտնան թէ, Տիկնանց Մասնախմբի խնդիրը 28 սնտուկի խնդրէն առաջ է:

Մասնախմբը իր ցաւալի որոշումն ընելէն վերջ, (որոշումը գաղտնի կը մնար վառնայի մէջ գոյութիւն ունեցող խումբերէն) յանկարծ խումբին մէկը պաշտօնական նամակով մը կը յայտնէ թէ, Վարդօն իրենց վստահութիւնը չարաչար գործածելով դրամները իւրացուցած է փոխանակ փոխելով զրկելու: Եւ կը յանձնարարէ Մասնախմբին որ այդիւս չը վստահին Վարդօնի նման զիջմանարարի մը:

Մասնախմբի անդամակիները խումբին կիմացնեն թէ՛ արդէն իրենք տեսնելով իրենց վստահութեանը չարաչար գործածութիւնը եւ Վարդօնին խաբուելին, լուծուած են եւ Մասնախմբը գոյութիւն չունի այլեւս:

3. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

(Շարունակելի)

ՕՐՈՒՄԱՆ ԲԱՂԱՔԱՎԱՍՈՒԹԻՒՆԸ

Վերջերս հրատարակուած պաշտօնական վիճակագրոյց մը կը տեսնուի թէ Անգլիա՝ 20 տարուան ժամանակամիջոցի մէջ՝ իր Պետական Պիւտեճէն մեծ համեմատութեանց մէջ աւելցուցած է. 1881ին, կլիւստրոնի վարչապետութեանը ներքեւ, ծախքերը 1,725 միլիոնով կը գոցուէին. չորս տարի ետքը, այս գումարը 1,845 միլիոնի կը բարձրանար: Յաջորդ նախարարութիւնը, Սոլպսբիի մարքիզին նախագահութեամբ, այս գումարը 6 տարի մէջ 2 միլիոն 88 միլիոնի բարձրացուց, որը քիչ ետքը 140 միլիոնի յաւելում մ'աւելցրեց. 1896ին, երբ Լորտ Ռոյլպէրիի դահլիճը տեղի տալու հարկադրուեցաւ Միտլանտիկանախարարութեան առջեւ, Պիւտեճէն 2 միլիոն 400 միլիոնի բարձրացած էր. իսկ վերջին տարեշրջանի ծախքերուն գումարը, պատերազմի համար որոշուած արտակարգ քուէարկութիւնները դուրս ձգելով, 3 միլիոն 287 միլիոնի բարձրացած է: Այսպէս ուրեմն, 20 տարի ընթացքին մէջ, Պետական ծախքերուն վրայ 1 միլիոն 562 միլիոնի յաւելում մը:

Այս յաւելումը սակայն, գրեթէ միմիայն ծովային ու պատերազմական պիւտեճէններու տարապայման յաւելումովը կրնայ բացատրուիլ. իր նաւատորմը անդադար կատարելագործեալ գիրքի մը մէջ պահելու համար մանաւանդ՝ Անգլիա մեծամեծ ծախքեր, նորանոր յաւելումներ ընելու հարկադրուած է. 1881ին ծովային պաշտօնարանի ծախքերուն գումարը 256 միլիոնէ աւելի չէր, մինչ այժմ այդ թիւը 2,756 միլիոնի բարձրացած է: Պատճառը այն է որ՝ պարագաները այսօր ալ նոյնը չեն, ինչ որ 20 տարի առաջ կրնային ըլլալ:

այն միջոցին՝ ծովային սպառազինութեանց մէջ Անգլիա 2-3 պետութիւն միայն իրեն մրցակից ունէր. իսկ աժ-1 չկայ Եւրոպայի մէջ, նոյնիսկ Եւրոպայէ դուրս, ունէ մեծ պետութիւն, որ կատարելապէս բոլորովն չըլլայ թէ յաւելուիկայ պատերազմի մը պատահականութեանը մէջ՝ ծովային ճակատամարտները, նաւամարտները ինչ էսովան դերեր խաղալու կոչուած են: Ֆրանսայէ զատ, — որ կը նկրտի զօրութեան ու թիւի կողմանէ իր նաւատորմը անգլիական նին հաւասարցնել, ու տակաւին այս տարիներ իր նորահար ընդծովեայ դորբիւնաւերուն շնորհիւ, ծովային սպառազինութեանց մէջ ամենամեծ յեղաշրջում մը բերելով, ամէն եթէպէտ թիւն անստուգութեան մատնեց, — Ֆրանսայէ զատ Ամերիկա, Իտալիա, Ռուսիա, Գերմանիա, Վիշիի մանաւանդ, տեղեւոր մրցուժով մը շարունակաբար իրենց նաւային սպառազինութիւնները յառաջ մղեցին. կը յիշուի Վիշիի միւլիոն խորտալից յայտարարութիւնները. «Պապ» ցամաքային զօրաւանակի կատարելութիւնը յաջողուց. իմ կոչումս պիտի ըլլայ նոյն բանը ծովային բանակներու մէջ իրագործելը»:

Բոլոր պետութեանց այս յառաջդիմութեանց հսկող, Անգլիա պարտաւոր էղաւ նոյն համեմատութեամբ իր ծախքերն աւելցնել. վստիզի, առանց հաշուի առնելու ցամաքային պետութեանց բաղդատմամբ՝ անգլիական զինուորական ուժին անհամեմատելի տկարութիւնը, այդ պետութիւններէ ոչ մէկին համար նաւային պաշտպանութեան խնդիրը, այնքան հատու անհրաժեշտութեամբ մը մահու և կեանքի խնդիր մ'է:

Ծախքերու այս շարունակական յաւելումին մէջ, անգլիական Ծովային կալութիւնը կը հետեւի որոշ նշանաբանի մը. անգլիացի ռազմագէտները կը ջանան Անգլիոյ ծովային պիւտեճէն մը շտապարային երկու պետութեանց ծովային պիւտեճէն Կոնէ հաւասար պահել, որպէս զի իրենց նաւատորմը Կոնէ երկու մեծ պետութեանց միացեալ նաւատորմին յաջողապէս գիմարելու կարողանայ. ու հաշիւ կընեն որ, եթէ այդ միացեալ նաւատորմին երրորդ պետութիւն մ'աւելանակցի, իրենք ալ դաշնակից մը կրնան ճարել. հետեւապէս, համեմատութիւնը միշտ նոյնը կը մնայ. իրաւ ալ, Ծախքերուն Արեւելքի խնդիրներու մասին, արտաքին գործերու արդի նախարարը՝ Մարքիզ Լանստոնը, Անգլիան իր դաւաճող մեկուսացումէն հանելով, Ճարտի հետ զինակցութիւն մը կնքեց, որուն համեմատ երկու դաշնակից պետութիւնները յանձն կառնեն իրարու փոխադարձաբար օգնել՝ եթէ իւրաքանչիւրին հակառակորդ պետութիւնը դաշնակցի մը օգնութիւնը վայելէ:

Բայց խնդիր է թէ ծովային պատերազմ մը, նոյնիսկ Ծախքերուն Արեւելքի խնդիրներու մասին, խաղաղականի ջարդերուն մէջ մզուելու է: Լա Ռոլլի միջադարձին հսկող, այս ամառ անգլիացի «զգլիկ» երեսփոխանի մը մէկ կարեւոր ուսումնասիրութիւնը հրատարակեց, ուր փաստաւորեց նկատողութեանց մէջ կը հաստատուէր թէ, որ և է խնդրոյ առթիւ մեծ պետութեանց միջեւ պատերազմի մը միջոցին, Միջերկրական ծովը հարկաւորս պէս վճարական նաւամարտներու կայանք պիտի ըլլայ:

Եւ այսին է որ Միջերկրականի մէջ Ֆրանսա նաւային շատ կարեւոր դիրքեր ունի, ուր կը գտնուին թուրք զինուորական առաջնակարգ նաւահանգիստը, որ ըստածին նայելով, Մալթան իսկ պիտի կրնայ գերազանցել: Այս մասին Անգլիոյ բոլոր անկեղծութիւնը իտալիոյ վրայ էր, որուն հետ անգլիական կառավարութիւնը միշտ բարեկամական յարաբերութիւններ մշակելու կը ջանար. իտալական Մատալէնա զինուորական նաւահանգիստը կրնար Պիզերի դիրքը չէզոքացնել: Դեռ բաղդապէս ֆրանսիական մերձեցումը, որու մասին այս էջերուն մէջ խօսեցանք, Անգլիան ձեռնունայն կը թողու, և այժմու միջազգային յարաբերութեանց կերպարանքին առջեւ, Անգլիա պարտաւոր է յոյսը միմիայն իր վրայ դնել:

Իտալիոյ նոր քաղաքականութիւնը, այս պատճառաւ անգլիացիները վերջին ծայր կը շահագործուէ. «Իտալիա և Ֆրանսա», կըսէ ազատական կուսակցութեան մեծ օրաթերթը, Տէյլի Նիւզ, արդէն միաբանած են Մառքը, թիւնիզը, Ալժիրին և Թրիբոլին իրենց մէջ բաժնելու համար. հետեւապէս, Արեւմտեան Միջերկրականը, Ճիպրալտէ մինչեւ Սիկիլիա անհրաժեշտորէն Լատինական աւազան մը ըլլալու վրայ է: Ճիպրալտար, Մալթայէն Պիզերիով անջատուած, իր օգտակարութիւնը կը կորսնցնէ, և այս մերձեցումը նոյնիսկ Հնդկաստանի ազատ ճանապարհը կը փտաճէ:

Ու ցոյց տալէ վերջ թէ Միջերկրականի արեւելեան մասը տիրականօրէն ռուսական ու գերմանական յափշտակութեանց վերապահուած է, Տէյլի Նիւզ կը յաւելու. «Մենք ալ քանի որ Միջերկրականի մէջ բան մը չենք կարող ընել, աշխատինք մէկ կողմէ Սուէզի ու միւս կողմէ Ճիպրալտարի բերանները գոցելու, և այն ատեն, Ամերիկան ու Ճարտն ալ դաշնակից ունենալով, բոլոր Ովկէաններու վրայ միահեծան կըրնանք տիրապետել»:

Ըրած սրտի աղուճը միմիայն թանք է:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուած է 62 քուէից միաձայնութեամբ ԱՄԵՆ. Տ. Տ. ՍԱՀԱԿ ԱՐԲ-Ե-ՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՊԱՅԵԱՆ: Պոստոյ Պատրիարքը հեռագրաւ իմացուցած է Տ. Տ. Սահակ Արքեպիսկոպոսի և զինք շնորհաւորած. բայց իշմէ տակաւին պատասխան չէ ստացուած. կը յուսացուի թէ այս անգամ Ն. Ամենապատուութիւնը համակերպի ազգին զինք կաթողիկոս տեսնելու բաղձանքին:

— Տ. Յովհաննէս Կիւմիւշեանի կտակագիրը Պատրիարքարան յանձնուած է, որով 10,000 լիւրա կը կտակէ ազգին: Մանրամասնութիւնք յաջորդով:

— Ամենայն Հայոց Հայրապետը Բարիզի հոգեւոր հովիւ Տ. Վրամ շապուհ քահանայ Գիպարեանի, ինչպէս նաեւ Ա. Մանթաշեանի ծախքով այնտեղ կառուցուած եկեղեցին Յանձնաժողովոյն օրհնութեան կոնգակ զրկած է:

— Վենետիկի Միտիարեան միաբանութեան անդամներէն Հ. Յակոբոս վարդապետ իսպաբերտեց վախճաններ է: Հանգուցեալը լեզուագիտութեան ու պատմութեանց հմուտ եկեղեցական մը եղած է, ու անգլիերէն և ֆրանսերէն լեզուներով թարգմանած է Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութեան պատմութիւնը, շարականներն ու Պատարագամատոյցը:

— Կովկասէն նոր կտակի մը լուրը կը հասնի. Թիֆլիզի մէջ վախճանած Մարիամ Մակարեան անունով այրի տիկին մը որ թողեր է 8300 լուրի կտակ մը, հետեւեալ հաստատութեանց անունով. Ա. Թատերաւան ընկերութեան 3000 լուրի, որուն տոկոսը պիտի յատկացուի ընտիր լեզուով թատերական շարագրութեանց. Բ. Ներսէսեան դպրոցին համար 1000 լուր, որուն տոկոսը գործածուելու է աղքատ աշակերտներու հագուստ և ալ անհրաժեշտ պէտքեր հայթայթելու. Գ. Երկրաչափական ուսումնարանին նոյնպէս 1000 լուր, որուն տոկոսը պիտի յատկացուի առանց դաւանանքի խտրութեանց՝ ամէն աղքատ ուսանողի. Դ. Վերայի Ս. Խաչ Եկեղեցիին 1000 լուր, որուն կէս տոկոսը պիտի յատկացուի հինգ նաւակատեաց իբր գերեզմանօրհնէքի վարձք, միւս կէսն Զատիկ օրեր աղքատներու պիտի բաժնուի. Ե. Հայուհեաց բարեգործական ընկերութեան 1000 լուրի. Զ. Ապագային բացուելիք «Մագիթադինէ» հաստատութեան համար ալ 1000 լուրի, պայմանաւ որ եթէ այդ հաստատութիւնը հանգուցեալին վախճանելէն երեք տարի յետոյ ալ չբացուի, այդ գումարը կանանց Հիւանդանոցին յատկացուի. Է. Թիֆլիզի հայոց հոգեւորականաց Ապա-

Հովութեան գանձարանին 300
րուբլի :

Այս պատուական կնոջ որդին
ալ Մկրտիչ Մակարեանցը՝ խոստա-
ցեր է իր կարգին Ս. Կարապետ
եկեղեցւոյ նորոգութեան համար
1000 րուբլի նուիրել :

ԿԱՎԱՍՏԻՍԱԹԸ ՄՈՒՀԱՃԻՐԼԵՐ

Գրեկընար սեպտեմբերի 1-ին թու-
սիայի սրբազան օրն 40,000-ի միւ-
թեանով իրենց խաչարարութեան
թիւրքիս սինորներուն իշերի գա-
պուլ օլընձալուպ, աչք օփառա
գալըն օլընձալուպ վէ պու սե-
ֆալէթուն իսթիլլաւ իշերն Ֆրան-
սա հիւքիւմէթինին թէվաւութը-
նա միւրաճաւթ էլլէտիքլէրինի
կէչէն հաֆթա եազմըն րորդ :
Լէօնօքէնին պէլանը իւզոն՝ մեզ
քիւր մուհաճարէր ինկիլիզ տեօվ
լէթինին տախ թէվաւութընա
միւրաճաւթ իթմիլլէր իսթէն, է-
լան հիշ պիւր թահաֆտան պիւր
մուսթէն տուլլուվալըն տըր :

Աճէմ Շահընըն սոն եօլմըլը
միւրաճաւթ իթմիլլէր անը խանէսինէ մի-
սաֆիլէթէն գապուլ իթմիլլ օլան
Մ. Թուսնեանց՝ Կապիկաթաթը
մուհաճարէր ինկիլիզ պիւր գըսմըն
Աճէմիտան տախիլլէր իսթէն
իշերն՝ մահէ կէսթէրիլմէսի պա-
պընտա Շահ հազմէթլէրինէ բէճա
իտէճէկի մէսմուլմիզ օլմուշ տըր :
Մ. Թուսնեանցըն պու թէվա-
սուլթր մուհաճարէրին իսթիլլուվ
իւզէրինէ վուգու պուլմուշ տըր :

ԷՐՄԵՆԻՍՏԱՆ ԱՀՍԱԼԸ

Վան տէնիզինին չիմալ ճիհէ-
թինտէ պուլընան Ախլաթ, Պու-
լանըգ, Մանազկերտ վէ սայիւր
պիւր թագըմ Մուշ քէօլլէրինտէ
էնվայի վահշիլիքլէր իճրա օլըն-
տըլը մահէլինտէն վիլուտ իտէն
մուֆասալ մէթուպարտան անլա-
շըլմագտա տըր : չէօլլէ քի՝

ՎԱՆ, 12 Սեպտ. — «Ախլաթ
գազաւընըն Բարթոնը խանէտան
Թովմաս Մանուկեանըն խանէսինի
քիւրալէր իհաթէ իտէրլէր վէ «հիւ-
քիւմէթին էմրի իլէ էրմէլիլէրի
քէսէճէկիզ» տէլուպ Թովմասը
բարալարար, վալիտէսինին գար-
նընը եարարար, խրդմէթեարըն
պաշընը վէ ալազլարընը քէսէր-
լէր : Սոնրա խանէի եազմայա վէ-
րիլլէր : Ախլաթ հիւքիւմէթի վու-
գուսթը տուլար վէ քիւրալէրին
Ֆլըման նամ րէյիսինի սէրպէսթ
պըրագըր, պուլըն եէրինէ էրմէ-
նիլլէրի միւհրիմ սըֆաթը իլէ թու-
թարհապս իտէր» :

ՏՐԱՊԻՉՈՆ, 8 Հոկտ. — «Պու-
լանըգ գազաւընտա Պոսթանքէնտ
քէօլլէտէն Ճիպրանը աշիլլէրին-
տէն Սայիտ Նատո-գատէ նամ
քիւրալ րէյիսին իճրա իթմիլլի
ճիւնալէթլէրտէն պիւր գաշը :

«Սիմոնըն Կիւնազ նամ գըլընը

աշըրտը, րըլընա կէշտի վէ պիւր
քիւրալէն նիկեազ էթմիլլէր :

«Արթուրն Բաշէ գըլընը աշը-
տը րըլընա կէշտի վէ պիւր քիւրալէ
պալաշիլ վէրտի :

«Իւշ սէնէ էվվէլ Կոճօնըն զէվ-
ճէսինի աշըրմըլ րոր. մէվպուլէ
ախիլլէն վալիտէսինին խանէսինի
գաշըլ օլտըլընտան Սայիտ խա-
նէի պատուպ անը օրտաա գաթիլ
իլտի : սոնրա ինթիգաւմընը իքմիլ
իթմէք իշիւն Կոճօնըն գըլընը
տախի աշըրուպ պիւր քիւրալէ
վէրտի :

«Մէրգուլ Սայիտ» Նազարըն
գըլը Մարիալը տախի աշըրտը :
Պու Ֆադիլէ գաշուպ Մուշ Մու-
րախասաճէսինի իլթիլմա իթմիլ :
Սայիտ էվվէլ Նազարըն էօլտիւր
տիւ, սոնրա քէօլլէն րէյիսինի
կէճօլը, վէ տահա գաթիլէ տէ-
վամ իտէճէք իտի՝ էկէր Մարիա-
մըն վալիտէսի քէնտի էլի իլէ գը
գընը Սայիտին էլիլէ թէքըր թէս-
լիմ իթմէքսէ իտի :

«Իքի Կիւն Մուրաթըն էվվիլի ի-
հաթէ իտուպ, անըն Հէրքօ նամ
գըլընը ճէպրէն ալտը կէթիլը-
տիւ :

ՏԻԼԵՐԻՆԵՐ

«Հասաննըլ աշիլլէթի րէյիսի-
լէնտէն Սիլէլման վէ Բիլա Մա-
նալկէրտէքի Համիտիլէ գապի-
թանընտան օլուպ, էիլիզալ քէօ-
լիւ իւզէրինէ հիւքիւմ իթմիլլէր
վէ խանէտան Գիթգոր Մարտիրոս-
եանը խըզմէթեարընը վէ տիկէր
պիւր գաթիլ գաթիլ էլլէտիլէր :
Խաշօլը եարիլէտիլէր, 200 հա-
վանլէ հէր նէքի պուլտուլար իսթ
կէթիլարտիլէր : Կէչէն սէնէ տախի
մէզքիւր քէօլլէն 180 հալվաւ
սիւրմիլլէր իտի :

(Տեղաւի)

ՀԱՎԱՍՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԲԻԱ

Ինկիլիզ էլիսի Ատէնտէ թիւրք
ասթըրլէրին թուլանմասընա գարշը
Պապը Ախիլէ րթթէսթ իտուպ,
էկէր թիւրք ասթըրլէրի կէրի չէ-
քիլմէզ իսթ, ինկիլիզ տէօվլէթի
Հիւտիլաւտան ասթըր եօլլալուպ ան-
լէրի գօվաճագ տէմիլ տիլ :

Էլիսինին պու թէվտիտի իւզէ-
րինէ Սուլթան տէրհալ Սատրա-
ղամը, խաթիլիլէ նազըրընը, սէ-
րասըրի վէ շօրաի տէօվլէթ րէ-
լիսինի Երմըրզա Նազըրուպ պու
մէսէլէտէն տուլար միւզէքէրէ իթ-
տիլլէր :

Ինկիլիզ էլիսինին իքիլմէթիւր-
ճիւմանը Ատէնէ կիթմէք իշիւն
եօլա չըգտը. օրտաա հուտուտ
թայիլի իշիւն միւթէչէքիլ գօմի
սիօնա իլթիլաք իտէճէք տիլ :

— Պահիլիլէ Նազըրըն Իքի շըրհը
հազըրլամագտա օլուպ, անլէրի
Գըրմըլը Տէնիլէ կէօտէրէճէք
տիլ գուրսանլարը թագիպ իթմէք
իշիւն :

— Չարա վէ Չարիցայա Սուլ-
թանըն սէլաւարընը թագաթիմ վէ
Կրանտիւր Նիքօլալէիլիլէն զիլա
րէթիլտէն տուլար թէչէթիւրաթ
պէլան իթմէք մէմուրիլլէթի իլէ՝
սապրգ խաթիլիլէ նազըրըն թուր-
խան Բաշտըն րէյիսիլլէթի ալթընտա
պիւրհէլլէթի մուրախաւէտալ կիթէսի
Եալթալա կիթմէք իշիւն Սիլթան
պօլտան Կօլա չըգտը : Բիլալլէթէ
կէօլէ, Սուլթան քէնտի էլիսազըսը
իլէ Չարա պիւր մէթուպ տախի
եօլլամըլ տըր : Բուս էլիսիլ թուր-
խան Բաշտըն հէրինէ սուլթան-
լար սիլալէսինտէն պիւր րէնսին
կիթմէսինի թէքիլիլ իթմիլ իտի
իսթէն, Սուլթան Համիտ անլէր-
տէն հիշ պիւրիսինէ կէօլիւնտէն
Ի. ագ կիթմէկէ միւսաւտէն իտէ
մէյօր : Մ. Մաքսիմով տախի պէ-
րապէր կիթմիլ տիլ :

— Իլլիլիլէ Պալաւալէնըն գաթ-
լընտան տուլար պիւր գարը-գօճա
տախի տէրտէթ օլընմըլ տըր :
պուլար եազընտա իլլիլիլէ կիթ-
միլլէր :

ՏԱԼԻԼԻԹԷ

Մէլիսի Մէպուսան (Սօպրանիլ)
աշըրտը. վիլլէլա րէյիսի Մ. Տա-
նէվ՝ մէլիսին քիլաւտը իշիւն հիւ-
քիւմտարա մախաւա օլան նուլթը
գրաւթ իտէրէք, Պուլարիսինըն
հէր պիւր տէօվլէթ իլէ միւնասէ-
պաթը տօթանէտէ պալլընտըր-
նը, վէ Կրանտիւր Նիքօլալէն վէ
րուս թէնէրալարըն Շըրգա մէրա-
սիմի միւնասիլլէթի իլէ թէչիլիլ-
լէրինտէ՝ Պուլար միլլէթինտէն
իպրագ օլընտան հիւսնի գապուլ-
տան տուլար մէմուրիլլէթ պէլան
իթմիլ, վէ պու թէչիլիլիլ Պուլ-
կարիա իշիւն միւսէլլէմ օլան Չա-
րըն լու թիլ ու թէվէտէրհիլլէն եէնի
պիւր տէլիլ տիլ վէ գալթարընը վէ
գուրթուլան իքի միլլէթ պէլին-
տէքի մէվմուտ օլան պաղըն պօ-
զուլմագ օլտըլընը րսպաթ իտէր
տէտի :

Քէզա հիւքիւմէթին տէօվլէթ-
լէրէ խիթալ հիւսնի հարէքէթի
սայէսինտէ քէնտի զայլէթի ու
իգտաւաթը անլէրտէն թագաթիլլէ
լընաճընա վէ Պալլան եարմ
ատաւընտա աշտնամէլէր ահքեա-
մընա ասայիլին իպգա օլընաճա-
ղընա, եանի Մաքէթնիա իսլա-
հաթը տէօվլէթլէրին իճրա իթ-
տիլլէթիլլէրին իսթալա պէլան
իթմիլ : (Պօշ օլմասըն) :

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

Շու կիւնլէրտէ կիլիթի սուլա-
րընտա պուլլընտին ինկիլիլ տօնան-
մաը մանէվրալար իճրա իտէրէք
գաղայա ասթըր էնտիլտի, Իւ-
պուլար Գանեսայա գատար իլլէր-
լէյէրէք օրտաա Բիլէն Եօրիլի վէ
ինկիլիլ ամիլալընը սէլաւաթը-
լար : ինկիլիլլէրին շու հարէքէթի
պիւր նէվ կէօլ տըլտըրմագ օլուպ,
իլլիլլէրի հալ կիլիթի քէնտիլ-
լինէ պիւր մէսքեան, պիւր մէթէրիւ

իթմէք էֆըրարընա մէպիլ օլմալը :
— Լօրտ Քիլիլէր Ալէքսանտրիա-
լա էլլէթիլլէր, օրտաա խաթիլ իլէ
կէօրիլլէրտէն սօնրա Գահիլլէլէ
կիթմիլ տիլ :

ԹԻԼՃՆԱՐԻՅԷ

ՎԱՆԱ, 19 Հոկտեմբեր

ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ
Վալան Լիպ. 57-58 հքթ. 8.40/9.25
Արապալիպ. 53-62 հքթ. 8.-/10.30

ԱՐԲԱ,
Վալան 100 քիլո 9.40/9.50
Արապա 45-50 լիպ. հքթ. 5.60/6.-

ՉԱՎՏԱՐ
Վալան 53-54 լիպ. 7.-/7.20
Արապա 7.-/8.-

ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիլո 16.-/22.-
ԵՌԻԼԱՅ

Վալան 100 քիլո 10.40/10.50
Արապա հէքթ. 5.40/5.70

ՄԻՍԻՐ
Արապա լիպ. 56-57 հքթ. 6.-/7.80
Միսիլ եալ օլուր իսթ աշաղը ֆի-
լալլէ պիլէ ալան րէք պուլլընտար :

ՏԱՐԸ լիպ. 57-58 հքթ. 8.60/7.40
Կիւնտէ 300-400 արապա վէ 25-30

Վալան կէլմէքտէ տիլ :

Վալան մուսթէլլէսի ալթուս ֆը-
րանքլէ, արապա կիլիլլէլէ, Նաթ-
լէօն 20-40 ֆրանք :

ԲԱՄՈՒԴ

Վարնա մաղաղալարընտա իլլիք սա-
թըլարը :

Ինկիլիլ էրիլիլ Ն. 8-14 10.-
» » Ն. 18-24 12.-

Եէրիլ էրիլ Ն. 8-14 9.60
Աթըլմըլ բաւալը հօդա 2.-

Բաւալիլ ֆիլալթարը իլլիքսէլմէք-
տէ տիլ :

ՊԱՆԳԱԼԻԹԷ

Վարնա բիպալընտա պագալլէլլէ
մալլէրին պու կիւնքի ֆիլալթը, ալ-
թուս ֆրանք իլլէ :

ԳԱՀՎԷ 1.50/1.85
Շէֆէր Նէմցէ - .56

» (Բէսմէ) սանտըգ 29.50
Բիլիլիլ ճարտըն չուլալը 37.-/-

» Ֆիլիպէ » 37.50/-
» Ինկիլիլ » 25.-

» Բիլլէ » 52.-
ԿԱԶ Սանտըգ 7.30

ՉԵՅԻԼԻ ԵԱՂԸ քիլո - .78/- .90
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻԹ - .32

ՍԱՐԲԱՅԻԹԷ

Նաթուլէն 20.37 1/2 ֆրանք
Օսմ. լիլալը 22.80 ալթուս ֆրանք

ՄՐԱՀ "ՍԱՆԳՐՈԼ"

Նասիմսա (Յոյս) հայ գերասանական
խումբը ալա գիլիլ պիլիլ ներկայա-
ցունէ առաջնորդութեամբ Տ. Վ. Պա-
պանի «Ձեռնածուն» կամ «Յոփակ-
եաց շայր» բարոյալիլլէ եւ ընտանե-
կան թատերադրութիւն 4 արար :
Դիժաղաշարժ գաւելտ 1 արար :

Վաղը, կիլիլիլ գիլիլ, պիլիլ ներ-
կայացուի «Ռօպէլթ Աւաղապետ»
երգախառն թատերախաղ 4 արար :
Խիստ ծիծաղաշարժ գաւելտ մը :

ԳԻՆԵՐԸ. — Օրեակի, 1 թիւ 8 ֆր.
2, 3, 4, 5 թիւ 5 ֆր. 6, 7 թիւ
4 ֆր. — Ա կարգ 1.25 ֆրանք,
Ա. կարգ 1 ֆրանք, իսկ կանանց հա-
մար 50 սանթիլ, Բ. կարգ 5) սան-
թիլ, Կալէրի 30 սանթիլ :

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна